ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի Մ Ա Ր Զ Պ Ե Տ

« ---» « ----------» 2023թ. **N ----------**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ
ՊԱՐՈՆ ԳԱՌՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2023 թվականի հոկտեմբերի 30-ի ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմ մուտքագրված N 087/5432-2023 հարցման՝

Հարգելի պարոն Դանիելյան,

Տեղեկացնում եմ Ձեզ, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1657-Ն, 2023 թվականի հոկտեմբերի 05-ի N1715-Ն, 2023 թվականի հոկտեմբերի 17-ի N1765-Ն, 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N1861-Ն որոշումները Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների տրամադրման նպատակով պետական բյուջեից նախատեսվել է տնտեսագիտական դասակարգման 4267 «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով 228000000 ՀՀ դրամ, իսկ տնտեսագիտական դասակարգման 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 20000000 ՀՀ դրամ, որից առ 06.11.2023 թվականի դրությամբ 4267 «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածից ծախսվել է 169969971.3 ՀՀ դրամ՝ ՀՀ Արմավիրի մարզի համայնքների կողմից, համայնքում բնակություն հաստատած անձանց, տրամադրվել է սննդամթերք և սանիտարահիգիենիկ պարագաներ, իսկ 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածից ծախսվել է 7415000 ՀՀ դրամ՝

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am, armavir.qartughar@gmail.com,

դպրոցահասակ երեխաներ ունեցող ընտանիքներին 1 երեխայի համար միջինը 12500 ՀՀ դրամ՝ գրենական պիտույքների գնման նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցները ժամանակավոր բնակություն են հաստատել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր, Մեծամոր, Վաղարշապատ, Բաղրամյան, Փարաքար համայնքների պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ շինություններում՝ Արմավիր համայնք, ք. Արմավիր «Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ (*համայնքային սեփականություն*): Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին «Վաղարշապատի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ (*պետական սեփականություն*): Փարաքար համայնք՝ Այգեկի վարչական ղեկավարի նստավայր, Այգեկի մշակույթի տուն(*համայնքային սեփականություն*): Մեծամոր համայնք, Մեծամոր քաղաքի հյուրանոց (*համայնքային սեփականություն*), Մեծամորի բժշկական կենտրոն ՊՈԱԿ (*պետական սեփականություն*): Բաղրամյան համայնք՝ Շենիկի վարչական ղեկավարի նստավայր (*համայնքային սեփականություն*), Տալվորիկի վարչական ղեկավարի նստավայր(*համայնքային սեփականություն*):

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 11/6/2023 16:25:37 GMT+4

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Կատարողներ՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման
հարցերի վարչության գլխավոր մասնագետ՝ Գառնիկ Խաչատրյան
Հեռ. 023727649
՝ Ֆինանսական վարչության

հաշվապահական հաշվառման բաժին՝ Զաքարյան Լուսինե

Հեռ. /0237/ 2 16 29